ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հաստատության գործունեությունը 4

ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում 6
բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին 7
գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին 7

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր 11

2.1. Հաստատության շենքային պայմաններ 13
2.2. Հաստատության նյութատեխնիկական բազան 14
2.3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները 15
2.4. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ 16
2.5. Հաստատության ուսումնական միջավայրը 17
2.6. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ 18
2.7. Հաստատության տրամադրած կրթության որակը 19
2.8. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր /դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/ 21
2.9. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը 22
2.10. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության վերլուծություն 23
2.11. Համայնքի հետ համագործակցության, կրթության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն 24
2.12. Ռեսուրսներով ապահովվածությունը 25
2.13. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները 25
2.14. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը 26
2.15. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 26
2.16. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները 27
2.17. Հաստատության առկա հիմնախնդիրները 28

3. Նպատակների և խնդիրների սահմանում 29

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ 30

5. Պատասխանատուներ 30

6. Արդյունքների գնահատման չափանիշներ 31

7. Ռիսկեր 32

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան 34
Ոլորտ 2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը 36
Ոլորտ 3. Կառավարման և խորհրդակցական մարմիններ 38
Ոլորտ 4. Մանկավարժական համակազմ 39
Ոլորտ 5. Աշակերտական համակազմ 41

Ոլորտ 6. Ծնողական համակազմ 42
Ոլորտ 7. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ..... 43
Ոլորտ 8. Ուսումնական միջավայր..... 45
Ոլորտ 9. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների..... 46
Ոլորտ 10. Տեխնոլոգիաներ և նորարարություն 48
Ոլորտ 11. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր..... 49
8. Ակնկալվող արդյունքներ 50
9. Վերահսկողության մեխանիզմները 51
Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները 51
10. Եզրափակում..... 52
Հավելված. 53

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների **ՀՀ Լոռու մարզի, Վանաձորի «Դանիել Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**-ի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի առնելով կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Վանաձոր քաղաքի կարիքները:

Ծրագրի հիմքում դրվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերն ու առանձնահատկությունները:

Ուսումնական հաստատությունն իր կառավարության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Հիմք ընդունելով Վանաձորի թիվ 16 հիմնական դպրոցի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրը ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման ուղղություններն ու ռազմավարությունները:

ՀՀ Լոռու մարզի, Վանաձորի «Դանիել Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու, սերունդներին փոխանցելու համար:

Զարգացման ծրագրի հիմքում ընկած են ժամանակակից դպրոցի պահանջները, այն է՝ սովորողների համար ազգային հիմքի վրա հիմնված որակյալ, մատչելի, բոլորին հասանելի կրթություն ապահովելը՝ նպաստելով բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակված կարողունակ քաղաքացիների ձևավորմանը: Այդ քաղաքացիները կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված 21-րդ դարի քաղաքացիներ:

Մեր ժամանակները կարելի է բնորոշել որպես բոլոր ոլորտներում ընթացող սրընթաց և դինամիկ փոփոխությունների ժամանակաշրջան:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է՝

- Առաջանցիկ փոփոխություններ կրթական ոլորտում,
- Ստեղծել կրթական բարենպաստ միջավայր
- Ձևավորել սովորող և սովորեցնող անձ,
- Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ
- Սովորողի մոտ ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կկարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը,
- Ստեղծել նպաստավոր և տրամադրող պայմաններ հետազոտական գործունեության համար,
- Նպաստել սովորողների հաղորդակցական հմտությունների ձևավորմանը,
- Ձևավորել սովորել սովորելու կարողունակություն,
- Նպաստել սովորողների ինքնաճանաչմանը,
- Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- Երաշխավորել սովորողների ազատությունը,
- Հաշվի առնել սովորողի նախասիրություններն ու կարողությունները:

Դպրոցի նպատակը պետք է լինի ձևավորել ընդմիշտ սովորողներ, որոնք կցանկանան սեփական ներուժը իրագործելու և ապագայի պատասխանատվությունը ստանձնելու լիարժեք հնարավորություն ունենալ:

Կրթական ոլորտի խնդիրներն են.

- Կրթական որակի բարձրացում և մատչելիությունը
- Կրթական գործընթացից հետ չմնալը
- Ստանալ կրթություն ձգտումներին և ընդունակություններին համապատասխան:

ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցը նախատեսված է 905 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները (ըստ լիցենզիաների).

Առաջին աստիճան-տարրական ընդհանուր կրթություն՝ 405 սահմանային տեղով

Երկրորդ աստիճան-հիմնական ընդհանուր կրթություն՝ 500 սահմանային տեղով

Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները.

- Համակողմանիորեն զարգացած
- Հայրենասեր
- Ազգային արժեքներ կրող
- Մարդասիրության ոգով դաստիարակված
- Մրցունակ
- Ժամանակին համահունչ քայլող:

Հիմք ընդունելով դպրոցի կողմից արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ սույն ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը ձևավորելու պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացիներ:

Դպրոցն ունի բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման, անձնակազմի մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համապատասխան կրթություն տալու և այլ խնդիրներ: Համագործակցելով պետական հասարակական կառույցների հետ ու հաշվի առնելով միջոցների սահմանափակությունը՝ անհրաժեշտ է նախապատվություն տալ այնպիսի ռազմավարության, որոնք հնարավորություն են տալիս:

ա) համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք,

բ) առաջնությունը տալ արդյունքներին, որոնք հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում,

գ) ստեղծել զարգացումների համար բարենպաստ միջավայր սահմանելով անհրաժեշտ՝ կանոններ, զարգացման ուղիներ, որոնք նաև կխթանեն

առանձին կազմակերպությունների ու անհատների նախաձեռնությունը:

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը:

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Հաստատության անձնագիր.

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (հետայսու հիմնադիր): Դպրոցը հիմնադրվել է 1992 թվականին ֆրանսահայ բարեգործներ Առթին և Միշել Չինգիրյանների և ֆրանսահայ համայնքի ներդրման հաշվին: Դպրոցը գտնվում է Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասում: Երկհարկանի շենք է, որը համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Դպրոցն ունի ֆիզկուլտուրայի 2 մեծ դահլիճ: Բացի դրանից՝ դպրոցին կից կա 2 մարզադաշտ, որոնցից մեկը ծառայում է բասկետբոլի, մյուսը՝ ֆուտբոլի պարապմունքների համար: Դպրոցն ունի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ և ինֆորմատիկայի դասասենյակ, ինչպես նաև՝ ռազմագիտության և զենքի պահպանման կաբինետ, որոնք ապահովված են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Մինչև 2003 թվականը դպրոցը կոչվում էր Համո Սահյանի անունով և կրում էր 29 համարանիշը: 2003 թվականին թիվ 29 և թիվ 16 դպրոցները վերամիավորվեցին՝ համաձայն կառավարության որոշման, և դպրոցը վերանվանվեց Դ. Վարուժանի անվան թիվ 16 միջնակարգ դպրոց:

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Զեյթունի փող. 5 շենք:

Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի 44 աշխատակից, որոնցից 36-ը՝ ուսուցիչ՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ և կամավոր ատեստավորված: 6 ուսուցիչ ունեն տարակարգ: 4 վերապատրաստվող, 3 ուսուցիչներ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և ստանում են հավելավճար: Դպրոցի 2023թ. փետրվարի 3-ի ԿԳՄՍ նախարարի Ն09-Լ հրամանով ճանաչվել է eScool ծրագրի մենթոր դպրոց: 3 անգամ ճանաչվել է eTwinning դպրոց:

Խորհրդակցական մարմիններ

Մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը, աշխատանքային պլանը, գործում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունման, բյուջեի ճիշտ պլանավորման, կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և մի շարք այլ ուղղություններով: Խորհրդակցական մարմիններ՝ Դպրոցում կազմավորված են խորհրդակցական մարմիններ՝

- Մանկավարժական խորհուրդ
- Առարկայական մեթոդական միավորում
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ

Խորհրդակցական բոլոր մարմինները պետք է ունենան իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդները պետք է ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս։ Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է։

ՈՒԻԼՅԱՄ ՈՒՈՐԴ

Մանկավարժական խորհուրդ Եթե առկա է ֆինանսավորում, ուսումնական միջավայր և հանրակրթություն իրականացնելու օրենսդրություն, ապա ուսուցման գործընթացը կարող ենք կազմակերպել, եթե ունենք սովորեցնող և սովորող: Ուսումնական գործընթացի այս երկու մասնակիցներին առանձին-առանձին դիտարկելիս պատկերը թերի կլինի: Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը

Դպրոցում առկա են՝

- Փորձառու, ուսուցիչ-առաջնորդ, ուսումնական գործընթացում նախաձեռնողականություն և ստեղծարարություն դրսևորող մանկավարժներ
- Իրենց գործին անմնացորդ նվիրված ուսուցչական կազմ
- Մանկավարժական կոլեկտիվի համախմբվածություն
- Ժողովրդավարական աշխատաոճ, ազատ արտահայտվելու հնարավորություն, քննադատական մոտեցում

Դպրոցում աշխատում են 44 մանկավարժական աշխատողներ, այդ թվում՝

- Տնօրեն, ուսումնական և ՄԿԱ գծով փոխտնօրեններ,
- Դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ
- 1 օպերատոր
- 36 ուսուցիչ,
- 3 ուսուցչի օգնական
- 1 լաբորանտ
- 1 գրադարանավար

Դպրոցի ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը՝ 1/13,5

- Տարակարգ ունեն 6 ուսուցիչ,
- Ունենք 4 մենթոր ուսուցիչ

Առարկայական մեթոդական միավորումներ՝

- ուսումնասիրում, ընդհանրացնում են մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.
- նպաստում են ուսուցիչների որակավորման բարձրացմանը.
- կազմակերպում են մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.
- ուսուցիչներին հաղորդակից են դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում են սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

Դպրոցում գործում են 4 առարկայական մեթոդական միավորումներ՝

- Մաթեմատիկայի մեթոդմիավորում
- Պատմության մեթոդմիավորում
- Տարրական դասարանների մեթոդմիավորում
- Բնագիտական մեթոդմիավորում

Ծնողական խորհուրդ՝

Ազգերի ապագան մայրերի ձեռքերում է։

ՕՆՈՐԵ ԴԵ ԲԱԼԶԱԿ

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 18 անձից:

Ծնող-երեխա ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակիցն է, այդ պատճառով անհրաժեշտ է՝

- Ամենօրյա աշխատանքի արդյունքում ձեռք բերել փոխադարձ վստահություն և հարգանք, ամրապնդել ծնող-դպրոց կապը
- Խթանել ծնողների շահագրգռվածությունը որակյալ կրթություն իրականացնելիս
- Ընդգրկել ծնողներին ուսման կարևորագույն գործառույթներում
- Ներգրավել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
- Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների բնագավառում
- Կազմակերպել համատեղ հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար՝ ներկայացնելով դպրոցի գործունեությունը ու հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքները, լսել և քննարկել նրանց հետաքրքրող հարցերը
- Կարևորում եմ ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումը
- Լսելի դարձնել ծնողական խորհրդի առաջարկությունները և ընթացք տալ
- Հնարավորինս ամրապնդել ծնողի և դպրոցի միջև ամուր կապը

Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

- Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար,
- Սովորողի կրթական կարիքի գնահատում,
- Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
- Օտար լեզուների խորացված ուսուցում,
- Արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումների միջոցով համաշխարհային մշակույթին ծանոթ, հայրենասեր քաղաքացու ձևավորում,
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակույթային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ,
- Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
- Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային,
- Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
- Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ,
- Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

<u>Դպրոցի Աշակերտական խորհուրդը կազմված է 24 անդամից</u>

- Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

- համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.
- ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.
- հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման

և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.

- սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.
- սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը.
- հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.
- սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը.
- հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը.
- երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

2.1. Հաստատության շենքային պայմաններ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցն ունի լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններ՝ 3 հարկանի քարե շինություն, ունի 18 դասասենյակ, այդ թվում՝ համակարգչային, օտար լեզուների, ՆԶՊ կաբինետներ, 2 գրադարան, ունի առանձնասենյակներ՝ ընդունարան, տնօրենի, փոխտնօրենի, հաշվապահի աշխատասենյակներ, բուժկետ, պահակատուն, ռեսուրսային սենյակ, ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ: Բոլոր կաբինետներն ու սենյակները հագեցած են նորագույն տեխնոլոգիաներով: ➢ Ունի սպորտհրապարակ, հանդիսությունների դահլիճ և մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, լոգարաններով, մարզիչի (ուսուցչի) սենյակով և լոգարանով: ➢ Դպրոցն ունի ճաշարան և խոհանոց: ➢ Դպրոցն ունի նկուղային հարկ, որտեղ տեղակայված են ջրի պոմպակայան՝ պահեստային ջրի տարաներով, էլեկտրական վահանակի սենյակ և պահեստային սենյակներ: ➢ Դպրոցն ապահովված է լոկալ (գազի) ջեռուցման համակարգով, եռաֆազ հոսանքով, տարահանման ելքերով, տեխնիկական նշանակության սենյակներով: ➢ Տարածքն առանձնացված է ցանկապատով, կանաչապատված և ասֆալտապատ է: ➢ Դպրոցն ունի 16 սանհանգույց: ➢ Մուտքի մոտ և շենքի մեջ առկա են թեքահարթակներ: ➢ Շենքի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:	**Դպրոցը կարիք ունի՝** ➢ Դպրոցի բակը դեռևս ունի կանաչապատելու կարիք: ➢ Տեսախցիկների պահանջ: ➢ Դպրոցը չունի բուֆետ:

2.2. Հաստատության նյութատեխնիկական բազան	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցը ձեռք է բերել նաև մարզագույք՝ բարձրացատկի կանգնակ, ներքնակներ, կամրջակ, մարմնամարզական այծիկ, բասկետբոլի վահանակ օղակով, մարմնամարզական նստարաններ, մագլցման պարան: Համակարգչային կաբինետի համար ձեռք է բերվել գույք՝ համակարգիչներ (All-in-one)՝ 21 հատ, 5 դյուրակիր համակարգիչ, ups, Wi-Fi-ի սարք: ➢ Նաև ձեռք է բերվել ճաշարանի գույք: ➢ Դպրոցում գործում է նաև «Արմաթ» լաբորատորիա՝ համապատասխան գույքով: ➢ Ունի ԿԱՊԿՈՒ կրթություն ստացող երեխաների համար մասնագետների հետ աշխատելու հարմարեցված սենյակ: ➢ Ապաստարան: ➢ Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները: **Այս ամենի արդյունքում դպրոցն ունի նոր և ժամանակակից կահավորմամբ դասասենյակներ, լաբորատորիաներ, մարզադահլիճ և կաբինետներ:**	**Դպրոցը կարիք ունի՝** ➢ Գրադարան՝ գեղարվեստական գրականությամբ հագեցված: ➢ Միջանցքների արդիականացում: ➢ Դպրոցի շենքը հնարավորինս հարմարեցնել ԿԱՊԿՈՒ երեխաների հարմարավետությանը:

2.3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Կառավարման խորհուրդը մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: ➢ Մանկավարժական խորհուրդը համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է 44 մանկավարժներից: Բոլորն ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում և ատեստավորված են, նրանցից 3-ը մասնակցել են կամավոր ատեստավորմանը, 6 ուսուցիչ ստանում են հավելավճար, 6 ուսուցիչ ունեն առաջին աստիճանի տարակարգ: ➢ Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացնում են հանդիպումներ սովորողների հետև լուծում տալիս խնդիրներին: ➢ Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Սերտ համագործակցում է դպրոցի հետ: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է բազում էքսկուրսիաներ, այցելություններ դեպի թանգարաններ և այլ միջոցառումներ:	➢ Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ և շրջանավարտների խորհուրդ: ➢ Հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին վեբինարներին ցածր մասնակցություն: ➢ Պասիվություն տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին:

2.4. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցն համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Լոռու մարզպետարանի Վանաձորի համայնքապետարանի, ԿՀՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, գրադարանների, ՀԼՄ-ների, իրավապահ մարմինների, դպրոցի շրջանավարտների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, նախադպրոցական հաստատություն, ՀՀ մասնագիտացված ուսումնական հաստատություններ:	➢ Կրթության ոլորտով հետաքրքրվողների համագործակցության և ներգրավվածության պասիվություն: ➢ Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն: ➢ Համագործակցության պասիվություն արտերկրի դպրոցների հետ:

2.5. Հաստատության ուսումնական միջավայրը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Ուսումնական միջավայրը լուսավոր է, ընդարձակ, հարմարավետ, գեղեցիկ և ժամանակակից կահավորված միջանցքներով, ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը, պահպանված է միջավայրի հավասարություն ու հասանելիությունը սովորողների համար: Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար միջավայրի որոշ հատվածից օգտվելու հարմարավետություն և խելամիտ հարմարացումներ կան: ➢ Դպրոցում ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարին: Բարձր հիմքերի վրա պետք է պահել աշակերտհամայնք-դպրոց կապը: Դպրոցը համայնքի համար ոչ միայն կրթական, այլև Մշակույթային օջախ է: ➢ Ինքնավարությունը պետք է արտահայտվի Տնօրենություն աշակերտների ինքնադրսևորման կարծիքի ազատ արտահայտմամբ: Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները: Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը: Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:	➢ Չունի բուֆետ

2.6. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցի մանկավարժները ըստ անհրաժեշտության պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր: Ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ են կիրառում դասապրոցեսին, կազմակերպում են փորձի փոխանակում դպրոցի և այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ: ➢ Ունենք «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հաղթող, տարակարգ ունեցող մենթոր ուսուցիչներ, ովքեր պարբերաբար վերապատրաստում և ծանոթացնում են մեր մանկավարժներին կրթության ու զարգացման նորարարության ոլորտի մեթոդաբանությանը: ➢ Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայրենասիրական միջոցառումներ և դասեր: ➢ 2023թ. փետրվարի 3-ի ԿԳՄՍ նախարարի N09- L հրամանով դպրոցը դարձել է մենթոր դպրոց՝ հանրակրթության պետական չափորոշչի ներդրման նպատակով վերապատրաստումներ իրականացնելու համար:	➢ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության պասիվություն: ➢ Ոչ բոլոր ուսուցիչներն են զարգացնում իրենց գիտելիքները հիմնականում դա արվում է հերթական վերապատրաստման համար: ➢ Առաջացող փոփոխություններին դժվար ինտեգրում: ➢ Խրախուսել ակտիվ ուսուցիչներին: ➢ Ձևավորել միջդպրոցական մեթոդական միավորումներ: ➢ Կամավոր ատեստավորման փոքր քանակ: ➢ Մշակել խրախուսման մեխանիզմներ այն ուսուցիչների համար, որոնք ներկայացնում են որևէ նորարական ինքնուրույն մշակված ծրագրեր:

2.7. Հաստատության տրամադրած կրթության որակը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Լուրջ աշխատանք է կատարում ուսման որակը բարելավելու, աշակերտների կարողությունների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումները զարգացնելու, առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեությունը և ռազմահայրենասիրական, հայրենասիրական, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար: ➢ Առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները խոսում են ուսման որակի բարձրացման մասին: ➢ Դպրոցն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տարածքային, և մարզային օլիմպիադաներին, իսկ հանրապետական օլիմպիադաների հաղթողներ: ➢ Դպրոցն ակտիվ մասնակցում է նաև մարզական միջոցառումներին: ➢ Դպրոցում կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումներ, որոնք զարգացնում են սովորողի ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական ճաշակը, Մշակույթային զարգացածություն, հայրենասիրական դաստիարակությունը: ➢ Դպրոցի առաքելությունն է՝ ապահովել, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, արդյունավետ շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել արժանապատիվ աշխատանքային գործունեության: ➢ Դպրոցի առաքելությունը ազգանվեր, հայրենասեր, համամարդկային արժեքներով օժտված մարդ կերտելն է: ➢ Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և	➢ Միջազգային օլիմպիադաներին մասնակցության պասիվություն: ➢ Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության սակավություն: ➢ Բացառիկ կարողություններով աշակերտների սակավություն:

առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին: Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար: Այդ են վկայում աշակերտների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները: Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները. ա. Կազմվում են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան, բ. մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, գ. պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ, դ. տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը, ե. յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր և ուղարկվում ծնողներին, զ. աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են ուսման առաջադիմությունը, որակը, է. ըստ անհրաժեշտության անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ, ը. ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը, թ. դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ՝ նոր չափորոշիչներին համապատասխան: ➢ Դպրոցում ուսման որակի վրա մեծ ազդեցություն են ունենում տարբեր առարկայական օլիմպիադաներում աշակերտների գրանցած արդյունքները, ԳԹԿ-ի կողմից գիտելիքների ստուգման համար նախատեսված գրավոր աշխատանքների արդյունքները:	

2.8. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր /դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն ➢ ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան ➢ Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու, ՈՒԹՀՎ վերլուծություն կատարելու նպատակով	➢ Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն ➢ ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում՝ որպես ներքին իրավական ակտերի

2.9. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Վարչական կազմ • Ղեկավարման բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմը • Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացումը, • Կառավարման ժողովրդավարական ոճը, • Կադրային ճիշտ քաղաքականությունը, • Բոլոր օղակների աշխատանքի համակարգվածությունը և վերահսկողությունը, • Մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմը • Նպատակաուղղված և արդյունավետ ներդպրոցական վերահսկողությունը՝ միտված կրթության որակի ապահովմանը • Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը ➢ Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ • անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները • բարձր պատասխանատվությունը, • աշակերտակենտրոն մոտեցումները • սովորողի հաջողության կարևորումը և գնահատումը • Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը • Մեթոդական սեմինարներ՝ միտված ուսուցման որակի բարձրացմանը • Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները • Քաղաքացիական դաստիարակությունը. արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում • Արտադասարանական և համադպրոցական միջոցառումները • Հանրապետական պարբերականներում տպագրված գիտական կամ մեթոդական հոդվածները • Փորձառու և կոմպետենտ լաբորանտները • Սպասարկող պատասխանատու անձնակազմը	➢ Միջազգային գիտաժողովներին մասնակցության բացակայություն ➢ Միջազգային մրցույթներին մասնակցության ցածր տոկոս ➢ Հանրապետական և միջազգային սեմինարների, վեբինարների ցածր մասնակցություն

2.10. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Միջինից բարձր առաջադիմությունը ➢ Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին ➢ Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու», «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին ➢ Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը ➢ Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին ➢ Բուհեր, այդ թվում և միջազգային, ընդունվելու բարձր ցուցանիշը	➢ Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշը

2.11. Համայնքի հետ համագործակցության, կրթության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ➢ ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում ➢ ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում ➢ Հաստատության գործունեության թափանցիկություն ➢ Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ ➢ Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների ➢ Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն ➢ Ամենամյա եռակողմ նիստ, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտներն էլ արժանանում են տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/:	➢ Համագործակցության, նախաձեռնությունների պասիվություն վերջին երկու տարում պայմանավորված համավարակով

2.12. Ռեսուրսներով ապահովվածությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Հմուտ և որակյալ կադրեր ➢ Աշխարհագրության վերաբերյալ նոր ուսումնական նյութեր ➢ Ֆիզիկայի լաբորատորիա, քիմիայի և կենսաբանության լաբորատորիա՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով և ուսումնական նյութերով ➢ Համակարգչային բավարար տեխնիկա	➢ Նոր սերնդի էլեկտրոնային գրատախտակներ և պրոյեկտորներ ➢ Նոր գույք ➢ Հանդիսությունների դահլիճի կահավորում ➢ Համակարգչային սենյակի կահավորում ➢ Գրադարանի և ընթերցասրահի կահավորում ➢ Մեթոդ կաբինետի վերաբացում

2.13. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում ➢ Հեռավար կրթական հարթակի կիրառում ➢ Հեռավար դասերի վարում ➢ Նախագծային աշխատանքների կազմակերպում ➢ Շրջված դասարան մոդելի կիրառում	➢ Ուսուցանող գնահատման ներդնում ➢ Դրամաշնորհային ծրագրեր

2.14. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Համագործակցություն ինչպես ՀՀ, այնպես էլ արտասահմանյան բուհերի հետ՝ ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀՊՏՀ, ԵՊԼՀ, ՄՅՍԻ, Երևան քաղաքում Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ ➢ Ռուսերենով ուսուցման կազմակերպման շրջանակներում համագործակցություն ՀՀ ԿԳՄՍ նախա-րարության և «Россотрудничество» դաշնային գործակալության հայաստանյան գրասենյակի հետ, ➢ Համագործակցություն մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի սոցիալիզացիային նպաստելու, քաղաքացիական գիտակցություն ձևավորելու նպատակով. • «Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ»	➢ Միջազգային բուհերի և կառույցների հետ համագործակցության ընդլայնումը

2.15. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները ➢ Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը ➢ Գրագետ մենեջմենթը՝ ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը՝ ըստ օրենսդրական պահանջների ➢ Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարումը ➢ Նոր գույքի ձեռքբերումը ➢ Հակահամաճարակային կանոնների պահպանման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը	➢ Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալը ➢ Աշակերտների թվի նվազման հետևանքները ➢ Արտաբյուջետային միջոցների բացակայությունը ➢ Լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրման բացակայությունը ➢ Ծնողների, համայնքի, բարերարների կողմից ներդրվող միջոցների բացակայությունը

2.16. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ՝ բավարար հագեցվածությամբ, որը կիրառվում է ինֆորմատիկա առարկայի դասաժամերը, գործնական, լաբորատոր աշխատանքները նպատակային և լիարժեք կազմակերպելու, իրականացնելու և տարբեր ինտեգրված համակարգչային դասեր անցկացնելու համար: ➢ Ինտերնետի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս ոչ միայն աշակերտներին, այլև ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մասնագիտորեն կատարելագործվելու, դասն ավելի հագեցած ու բովանդակալից անցկացնելու համար: ➢ «Արմաթ» ինժեներական լաբորատորիան ակտիվորեն գործում է՝ ներգրավվելով բազմաթիվ աշակերտների: ➢ Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում: ➢ Դպրոցը հանդիսանում է eScool ծրագրի մենթոր դպրոց և 3 անգամ ճանաչվել է eTwinning դպրոց:	➢ Գրադարանի արդիականացում ➢ Օժանդակել ՏՀՏ ոլորտի ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը ➢ Հաճախակի դարձնել ՏՀՏ օգտագործմամբ ցուցադրական, օրինակելի դասերը ➢ Ստեղծել համագործակցություն ԱԹՍ ստեղծարար կենտրոնների հետ:

2.17. Հաստատության առկա հիմնախնդիրները

№	Ոլորտ	Խնդիրներ
1	Կառավարման և խորհրդակցական մարմիններ	➢ Շրջանավարտների խորհրդի ստեղծում ➢ Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության ամրապնդում:
2	Մանկավարժական համակազմ	➢ Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին դիմելու ցանկության խթանում: ➢ Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում:
3	Աշակերտական համակազմ	➢ Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված:
4	Ծնողական համակազմ	➢ Պասսիվ են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին: Սոցիալական անապահով վիճակից ելնելով պասիվություն են ցուցաբերում որոշ նախաձեռնություններին:
5	Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	➢ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: ➢ Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: ➢ Սոցիալ-Մշակույթային դպրոցի կայացում:
6	Ուսումնական միջավայր	➢ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
7	Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	➢ Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում: ➢ Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում: Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար լրացուցիչ աշխատանքների կազմակերպում:
8	Տեխնոլոգիաներ և նորարարություն	➢ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում, մենթորական համակարգի համալրում:
9	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	➢ Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Նպատակների և խնդիրների սահմանումը Առանձնահատուկ ուշադրություն դարձնել հասարակության կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ենթադրում է սովորողների կրթության մակարդակի բարձրացում, դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում: Ապահովել արդար, սկզբունքային գնահատում, կիրառել գնահատման նոր մոտեցումներ՝ նոր չափորոշիչներին համապատասխան: Ապահովել դպրոցը ուսումնամեթոդական գրականությամբ: Մշակել դասալսման և ուսուցչի աշխատանքի գնահատման բովանդակալից, թվային ամփոփվող ձևեր: Ուսուցիչների կողմից համակարգչային գիտելիքներ ձեռք բերելու և կատարելագործելու նպատակով կազմակերպել ներդպրոցական ուսումնական միջոցառումներ: Խրախուսել մանկավարժներին հետազոտական աշխատանքներ կատարել և ներկայացնել սեփական գիտակրթական նյութերը: Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև: Խթանել ուսուցիչների մասնակցությանը տարբեր մրցութային և կատարելագործման ծրագրերին: Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել կրթության որակի փաստացի վիճակը, որի համար շատ կարևոր են արտաքին և ներքին գնահատումը, դասալսումները, վիճակագրական վերլուծությունները և արդյունքների համադրումը: Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել և զարգացնել գիտելիքներ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային մոտեցումներ: Կարողությունների ձևավորմանն ուղղված դասերը հնարավորություն են տալիս ոչ ավանդական ձևերով և մեթոդներով ընդհանրացնել աշակերտների գիտելիքները, զարգացնել նրանց մտածողական գործունեությունը, աշակերտների մեջ ներշնչել վստահություն, համարձակություն և հետաքրքրասիրություն: Դպրոցում ուսման որակի վրա մեծ ազդեցություն են ունենում տարբեր առարկայական օլիմպիադաներում աշակերտների գրանցած արդյունքները, ԳԹԿ-ի կողմից գիտելիքների ստուգման համար նախատեսված գրավոր աշխատանքների արդյունքները: Ուսման որակի բարելավման աշխատանքները պետք է սկսել տարրական դպրոցից: Դպրոցի արդյունավետ գործունեության համար կարևորագույն պայմաններից է լիարժեք նյութատեխնիկական ապահովվածությունը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում:

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, տրամադրող, մոտիվացնող ուսումնական միջավայր: Դպրոցում չպետք է լինեն սովորողների նկատմամբ բռնության՝ ֆիզիկական, հոգեբանական ճնշումներ, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Ծնողները, ինչպես նաև երեխաները, պետք է համոզված լինեն, որ դպրոցում իրենք պաշտպանված են, և տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Պետք է մշտապես հոգ տանել սովորողների առողջության պահպանման համար, վերահսկել բացակայությունները, պահպանել համաճարակային կանոնները, ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ ծնողները հաճույքով իրենց երեխաներին կուղարկեն ուսումնառության:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի պատասխանատուներն են տնօրենը, փոխտնօրենները, մեթոդմիավորման նախագահները, ուսուցիչները, դասղեկները, լաբորատորիայի վարիչը, գրադարանի վարիչը, տնտեսվարը, որոնց ճիշտ և փոխհամագործակցված աշխատանքի արդյունքում դպրոցը կունենա ցանկալի և տեսանելի արդյունք: Օղակները պետք է աշխատեն համաձայնեցված՝ լրացնելով միմյանց: Միայն այդ ժամանակ աշխատանքը տեսանելի կլինի և ժամանակային առումով իրատեսական: Անհրաժեշտության դեպքում հաստատության գործունեության մեջ կատարվող և հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունների հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: «Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

7. ՌԻՍԿԵՐ

Ռիսկերը ցանկացած ծրագրի իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի և անսպասելի գործոններն են: Ցանկացած ծրագիր կամ ձեռնարկված գործողություն կապված է մի շարք ռիսկերի հետ, ուստի դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն էլ ունի իր ռիսկային գործոնները, որոնք կարող են ինչ-որ կերպ խանգարել դպրոցի զարգացման ծրագրում նախատեսված նպատակների իրականացմանը, օրինակ՝ տարերային աղետները, ֆորսմաժորային իրավիճակները, պատերազմները, իրավական հնարավոր կարգավորումների բացակայությունը, դպրոցի ֆինանսավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել ֆինանսական միջոցների նվազման և այլն:

- Ֆինանսական ներդրումների պակաս:
- Երբեմն ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության ոչ պատշաճ մակարդակ:
- Կամավոր ատեստավորման գործընթացի վերաբերյալ անվստահություն:
- Ծնողական խորհրդի, խորհրդակցական այլ մարմինների պասիվություն:
- Կրթության նկատմամբ համընդհանուր վստահության ցածր ցուցանիշ:
- Սովորողների հետաքրքրությունների և մոտիվացիայի ցածր մակարդակ:
- Սովորողների թվի նվազում, կապված ծնելիության նվազման և արտագաղթի աճի հետ:
- Հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման հետ կապված դժվարություններ:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ: ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

(3-8 բաղադրիչները ընդգրկված են ներքոնշյալ ձև 1 աղյուսակում)

Աղյուսակ. Ձև 1

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ոլորտ 1

Նպատակ՝

- Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը

Խնդիրը՝

- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Առարկայական կաբինետների ստեղծում և ձևավորում	2023-2024 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն, տնտեսվար	Ավելի գրավիչ կրթություն
	Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում	2023-2028 ուստարի	Տնօրենություն	Կրթության որակի բարձրացում
2	Բակի և սպորտհրապարակի բարեկարգում, կանաչապատում	2023-2028 ուստարի	կառավարման խորհուրդ, տնօրեն, տնտեսվար	Ունենալ ավելի հարմարավետ պայմաններ
3	Վարչատնտեսական համակարգողի սենյակի ավելացում	2023-2024 ուստարի մայիս, հունիս ամիսներ	կառավարման խորհուրդ, տնօրեն, փոխտնօրեն, ուսուցիչներ	Համակարգողի կարիքի բավարարում
4	Առարկայական կաբինետների ստեղծում և ձևավորում	2023-2028 ուստարի	տնօրենություն, ԱԽ, դասղեկներ, ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ	Պրակտիկ տեսական դասերի համախմբում
5	Դպրոցի միջանցքների արդիականացում՝ պահպանելով հին և ազգային, Մշակույթային արժեքները:	2023-2028 ուստարի	տնօրենություն, ԱԽ, դասղեկներ, ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, տնտեսվար	Սովորել գեղեցիկ միջավայրում
6	Գրադարանի արդիականացում, ծրագրային գեղարվեստական գրականությամբ համալրում, ուսումնաօժանդակ գրքերով համալրում, էլեկտրոնային QR կոդերով էլեկտրոնային գրքերի ձեռքբերում:	2023-2028 ուստարի	տնօրենություն, ԱԽ, ՄԿԱ գծով փոխտնօրեն, ԴԱԿ, տնտեսվար, գրադարանավար	Դասերի ավելի հեշտ հաղթահարում

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունք
7	Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (անհրաժեշտության դեպքում):	2023-2028 ուստարի	տնօրեն, համակարգող, տնտեսվար	Ստեղծել հարմարավետ պայմաններ
8	Հանդերձարանի նորոգում	2023-2024 ուստարի	տնօրեն, համակարգող, տնտեսվար	Ստեղծել մաքուր պայմաններ
9	Շենքային պայմանների համապատասխանեցում ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին	2023-2028 ուստարի	լիազոր մարմին, տնօրեն, տնտեսվար	
10	Հանգստի գոտիների ստեղծում միջանցքներում	2023-2025 ուստարի	տնօրեն, համակարգող, տնտեսվար	
11	Կինոսրահ, նկարչական սենյակ (արվեստանոց)	2023-2025 ուստարի	տնօրեն, համակարգող, տնտեսվար	

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի

Ռիսկեր՝

- ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն,
- արտաբյուջետային միջոցների բացակայություն,
- համավարակ,
- արտակարգ դրություններ,
- աշակերտ և դասարան թվի նախատեսվածից քիչ աճ:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց,
- համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում,
- տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ:

ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ոլորտ 2

Նպատակ՝

- Ֆինանսական միջոցների աճ

Խնդիրը՝

- Աշակերտ թվի ավելացման միջոցով դպրոցի բյուջեի աճ, արտաբյուջետային միջոցների ձևավորում

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Դպրոցի գործունեության, ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում, համագործակցություն հիմնական դպրոցների հետ՝ խթանելու ընդունելությունը	2024-2025 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	Խթանել համագործակցության կարողությունը
2	Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում	2024-2025 ուստարի	Տնօրենություն, համակարգող	Առավել մատչելի ուսուցում
3	Ներգրավել բարերարներ	2024-2025 ուստարի	Տնօրենություն, համակարգող	Սահմանել կրթաթոշակ
4	Շրջանավարտների խորհուրդ	2024-2025 ուստարի	Տնօրեն, հաշվապահ, համակարգող	Արտաբյուջեյի ստեղծում
5	Տնտեսումներ	2023-2028 ուստարի	Տնօրեն, հաշվապահ, համակարգող	Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի ձեռքբերում
6	Համայնքում գործող իրավաբանական անձից (ձեռնարկություն և այլն) երաշխավորված դրամական հատկացումների ձեռքբերում	2024-2028 ուստարի	Տնօրենություն, կառավարման և խորհրդակցական մարմիններ, համակարգող	Արտաբյուջեյի ձևավորում
7	Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ	2024-2025 ուստարի	Տնօրենություն, կառավարման և խորհրդակցական մարմիններ, համակարգող	Ֆինանսական կայուն հոսքերի ապահովում

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն

Ռիսկեր՝

- Աշակերտ թվի նախատեսվածից քիչ աճը և ոչ բավարար տնտեսումները
- Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
- Համայնքում գործող իրավաբանական անձանց հետ համագործակցություն ձեռք չբերելը
- Համավարակով պայմանավորված ոչ կայուն իրավիճակը

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը
- Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ոլորտ 3

Նպատակ՝

- Խորհրդակցական մարմինների ընդլայնում, նրանց միջև համագործակցությունը և դպրոց-համայնք կապը խթանելու նպատակով

Խնդիրը՝

- Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Ստեղծել շրջանավարտների խորհուրդ	2024-2025 ուստարի	Տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, կազմակերպիչներ	Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը
2	Շարունակել համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, դասղեկներ, ԿԽ, կազմակերպիչներ	
3	Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, թափանցիկության ապահովմանը	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, դասղեկներ, ԿԽ, կազմակերպիչներ	

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն

Ռիսկեր՝

- համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Հիմնադիր, լիազոր մարմին, բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ոլորտ 4

Նպատակ՝

- Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական դասավանդման որակների արդիականացում և բարելավում նպաստելու ուսուցման որակի բարելավմանը:

Խնդիրը՝

- Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը, տարակարգին, «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին դիմելու ցանկության խթանում: Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում և բարելավում: Վերա-պատրաստումներ, կամավոր և պարտադիր ատեստավորման գործընթացներ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, ԿԶՆԱԿ	Ուսման գործընթացը արդյունավետ դարձնել
2	Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ	Դպրոցի հեռանկարային ծրագրե-րի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորություններ
3	Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին, հանդիպում մենթոր ուսուցիչների հետ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ	Դասի ավելի արդյունավետ կազմակերպում
4	Ներդպրոցական վերահսկողություն:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենին կից խորհրդակցական մարմին	Միջավայրի և պայմանների բարելավում

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	
5	Ուսուցիչների վերապատրաստում, սեմինարներ, առաջավոր փորձի փոխանակում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ	Ժամանակակից մեթոդների օգտագործում

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր՝

- Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Պետական բյուջե, լիազոր մարմին, ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, ՀՄԿ, ՏՄԱԿ, հասարակական կազմակերպություններ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ոլորտ 5

Նպատակ՝

- Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական դասավանդման որակների արդիականացում և բարելավում նպաստելու ուսուցման որակի բարելավմանը:

Խնդիրը՝

- Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
2	Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում՝ հայրենաճանաչողական արշավների կազմակերպում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, մանկավարժական համակազմ	Դասապրոցեսին հեշտ ինտեգրում
3	Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում՝ • Սովորողների մոտիվացիայի խթանում • Ուսումնառության որակի բարելավում • Աշակերտական ինքնավարության խթանում • Արժեհամակարգի ձևավորում • Համագործակցային շրջանակների ընդլայնում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, մանկավարժական համակազմ	Ստանալ արդյունավետ կրթություն
4	Աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, մանկավարժական համակազմ	Նոր հնարավորություններ երեխաների համար համագործակցություն

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր՝

- Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:

ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ոլորտ 6

Նպատակ՝

- Հաճախակի կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ ծնողների շրջանում դպրոցի գործունեության շրջանում
- Լսելի դարձնել ծնողական խորհրդի առաջարկությունները ընթացք տալ:

Խնդիրը՝

- Խթանել ծնողների շահագրգռվածությունը որակյալ կրթություն իրականացնելիս:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Խթանել մասնակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին, վեբինարներին:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Ուսուցիչ-ծնող ծնող-դպրոց կապի ամրապնդում
2	Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ցուցաբերության ակտիվություն:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Ձևավորել ապրումակցումի կարողություն
3	Ներդպրոցական և արտադպրոցական տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Ռազմահայրենասիրության մակարդակի և ընկալման բարձրացում
4	Ներգրավել դպրոցում իրականացվող տարբեր հասարակական աշխատանքներին:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Ներգրավվածության աստիճանի բարձրացում

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր՝

- Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, ծնողների ցանկության պասիվություն:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում, դպրոցի հետ սերտ համագործակցության ապահովում:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Պետական բյուջե

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ոլորտ 7

Նպատակ՝

- Կոմպոնենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում

Խնդիրը՝

- Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների գրանցում:
- Համագործակցությունների շրջանակի ընդլայնում
- Սոցիալ-Մշակույթային դպրոցի կայացում

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ (թղթի մուկուլատուրա, շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն):	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Գեղագիտական ճաշակի բարձրացում
2	Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների հետ:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Զարգացնել համայնք-դպրոց կապը
3	Սոցիալ-Մշակույթային դպրոցի հիմնում՝ Ստեղծել Մշակույթային, արհեստի և արվեստի խմբակներ	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Գեղեցիկի մասին պատկերացումներ ստեղծելու և աշխատանք
4	Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Գեղեցիկն ընկալելու հանրավորություն
5	Կազմակերպել նկարչական մրցույթներ և ցուցահանդես-վաճառքներ՝ համայնքի և ծնողների ներգրավմամբ	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Հասույթը տրամադրել ծերանոցներին

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
6	Կազմակերպել միջոցառումներ, Մշակույթային ծրագրերով հանդես գալ մանկատներում և ծերանոցներում, գրադարաններում, թանգարաններում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Ձևավորել ապրումակցելու կարողություն
7	Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառումը 1-4 դասարանների համար՝ խթանելով դպրոց-Մշակույթային օջախ կապը, նպաստելով աշակերտների գեղարվեստական դաստիարակության ու գեղագիտական զարգացմանը:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ, ԾԽ, ԱԽ	Սեր սեփական ազգային մշակույթի նկատմամբ

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր՝

- Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազումը, համայնքի պասիվությունը:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Համաճարակային կանոնների պահպանում, իրազեկել համայնքին, ապահովել ակտիվ ներգրավվածությունը, կարևորել դպրոց-համայնք կապը:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Թղթի թափոնների հանձնում, բարեգործական ցուցահանդեսներ, ձեռնարկատիրական նախաձեռնություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ոլորտ 8

Նպատակ՝

- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը:

Խնդիրը՝

- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող, միջավայր շարունակական զարգացում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԴԱԿ, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով, դասղեկներ	Մշակույթային ինտելեկտի զարգացում
2	Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, դասղեկներ, քաղպաշտպանության շտաբի պետ	Զերծ պահել հուզական բռնությունից
3	Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	Նոր հնարավորություններ և առավել արդյունավետ գիտելիքների յուրացում:

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր

- Ոչ բավարար ֆինանսական միջոցներ, արտաբյուջետի բացակայություն:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Պետական բյուջե, բարերարներ, հովանավորներ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Ոլորտ 9

Նպատակ՝

- Կրթության որակի բարելավում, չափորոշիչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ:
- Աշխատանք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:

Խնդիրը՝

- Վերջնարդյունքների գնահատում մնացորդային գիտելիքների ստուգում:
- Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցիչների ապահովում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Կրթության որակի բարելավում, չափորոշիչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ: • Կրթության բարձր որակի, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում: • Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում • Մնացորդային գիտելիքի ստուգում • Հայտորոշիչ աշխատանքներ:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական գծով, դասղեկներ, մանկավարժական համակազմ	Առավել արդյունավետ գիտելիքներ
2	Հանրակրթության պետական չափորոշիչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար ուսուցումը խթանող աշխատանքների կազմակերպում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, դասղեկներ, քաղաքաշտպանության շտաբի պետ	Գիտելիքների առավել արդյունավետ յուրացում
3	Դաստիարակության և ուսման բովանդակությունն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական գծով, ՄԿԱ, դասղեկներ	Ավելի բովանդակալից դասերի կազմակերպում

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր

- Համավարակով պայմանավորված՝ սահմանափակումները, սաների թվի պակաս:

Ռիսկերը մեղմող գործողություններ՝

- Համաճարակային կանոնների պահպանում, կրթության որակի բարձրացում, նախակրթարանի առօրյայի ու թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական էջերում և դպրոցի կայքէջում՝ որպես ընդունելության խթանման միջոց:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Պետական բյուջե, արտաբյուջետ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ոլորտ 10

Նպատակ՝

- Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում:

Խնդիրը՝

- Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում, մենթորական համակարգի համալրում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ, ՀՄԿ	Դպրոցը հեռանկարային ծրագրերի հնարավորություն
2	Ժամանակակից գրականության ձեռքբերում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	Աշխարհը գեղեցիկ ընկալելու հնարավորություն
2	Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում:	2023-2028 ուստարի	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	ՏՀՏ-ների օգտագործում դասի ընթացքում
3	Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի համալրում:	2023-2028 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն	Նոր հնարավորություններ

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- ԿԽ-ն՝ ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ

Ռիսկեր՝

- Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ:
- Աշակերտ և դասարան թվի նախատեսվածից քիչ աճ:

Ռիսկերը մեղմող գործողություններ

- Դպրոցի ողջ գործունեության լուսաբանումը՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց:
- Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների պահպանում:

Միջոցները և նյութատեխնիկական պարագաները՝

- Բարերարներ, ՀԿ-ներ, պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր:

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Ոլորտ 11

Նպատակ՝

- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը:

Խնդիրը՝

- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող, միջավայր շարունակական զարգացում:

№	Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ժամանա-կացույց	Պատաս-խանատուներ	Ակնկալվող արդյունքներ
1	Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ	Հետևել իրավական ակտերում կատարվող փոփոխություններին
	Իրավական ակտերի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ վարում, օրենսդրական նորմերի պահպանում:	2023-2028 ուստարի	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ	Դպրոցի գործունեության հասանելիություն առցանց հարթակում

Արդյունքների գնահատման չափանիշներ՝

- Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», ՀՀ օրենքով «ՀՀ աշխատանքային օրենսգրքով» դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի թղթերով: Դպրոցին վերաբերվող բոլոր իրավամոտիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում է գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր:

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

- Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատված են խորհրդի կողմից.
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատված են խորհրդի կողմից
- Դպրոցի առաքելությունը և ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործողություններ իրականացվելուց հետո:
- Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման / առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման Ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ

* Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին:

10. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի, որոնք ապահովելու են նախորդ՝ 2018-2023 թվականների զարգացման ծրագրով նախատեսված և կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը:

Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր:

Կազմակերպությունը ճիշտ ղեկավարելը տվյալ կազմակերպության զարգացման փիլիսոփայությունն է, որը դինամիկ և շարունակական գործընթաց է:

Հարգանքով՝ Սիրանուշ Միրզոյան

Հավելված. ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի ֆինանսավորումը պետբյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից դասարան թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորությունները՝ ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Հաստիքացուցակը, նախահաշիվն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքում:

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բարեգործական աջակցություն, արտաբյուջեի ձևավորում, հովանավորներ, բարերարներ, շրջանավարտների խորհուրդ:

Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.

- ✓ Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- ✓ Կոմունալ վճարներ
- ✓ Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- ✓ Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- ✓ Մասնագիտական ծառայություններ
- ✓ Կապիտալ ծախսեր
- ✓ Կենցաղային և հանրային սննդի ծախսեր
- ✓ Պարտադիր ծախսեր
- ✓ Այլ ծախսեր:

2018-2023 թթ. ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած վերջին տարիներին ֆինանսական միջոցները նվազել են՝ պայմանավորված աշակերտների թվի նվազումով (նվազումը պայմանավորված է հիմնական դպրոցներում տվյալ ուսումնական տարում աշակերտների քանակով, սակայն, տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին և կոմունալ ծախսերին: